

- 14 Որ եւ զՇնոսին ըզհետ փոքու,
 Զոյգ նըւիրակ սուրբ Յակոբու
 Կարգէր յաշխարհս մեծ Մոսկովու,
 Եւ մանաւանդ Աժդարխանու:
- 15 Յետ վաղջանման Գըրիգորի,
 Սոյն երկոքին հայր եւ որդի,
 Գընան ի շէն Կոստանդենի,
 Յաւուրս Յակոբ պատրիարգի:
- 16 Անդէն նոքին մարդավարեալ,
 Առ ժամանակ մի դադարեալ,
 Տեառն Յակոբու ծանօթացեալ,
 Ի նրմանէ լինին պատուեալ:
- 17 Ուր Կարապետն որ սըվաճի,
 Ապարանից Թագաւորի,
 Տայր ըղքոյր իւր հարազատի,
 Պապիս Յակոբ վարդապետի:
- 18 Սոյն սա եղեալ յետոյ միջնորդ,
 Կարգիւր պապ իմ, անդ առաջնորդ,
 Շինին Աթայ յայնժամ պերճ յորդ,
 Պետրոս Բաբելոյն կացեալ յաջորդ:
- 19 Այս ինչ լինէր իբր յայն ամին,
 Յոր ըսկըսայ նախ առաջին,
 Յանգէտս գիտեւ զՂոյս արեգին,
 Անդ մօր իմում յանքոյթ գըրկին:
- 20 Իսկ յետ իբրու հընգից ամաց,
 Հաւն իմ Յակոբ զաթոռն յանձնեաց,
 Աբրահամու որդւոյն կամաց,
 Հաւանութեամբ իւրոց խաշանց: